

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՐԱՆ**

ԱՎԱԳՅԱՆ ԱՆԻ ՄՈՎՍԵՍԻ

**ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐԱՐՎԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ**

**ԺԹ. 00.01 - «Հոգեբանության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ**

**հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական դեկանակար՝ հոգեբանական գիտությունների թեկնածու,

դոցենտ Սուսաննա Միհրանի Փիլոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր,

դոցենտ ՍամՎել Սուրենի Խուդոյան

հոգեբանական գիտությունների թեկնածու,

դոցենտ Սյուզի Ֆելիքսի Սարգսյան

Առաջատար

Կազմակերպություն՝ Հայ-Ռուսական (Ալավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ.-ի դեկտեմբերի 20-ին, ժամը 12:00-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՆ-ի փիլիսոփայության և հոգեբանության թիվ 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաջված է 2013թ.-ի նոյեմբերի 19-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության

064 մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, հոգեբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Կ. Ե. Վարդանյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Դիմնախնդրի արդիականությունը: Փոխակերպվող հասարակության պայմաններում գտնվող երկրներին, ինչպիսին այսօր Հայաստանի Դանրապետությունն է, հասուլ են կյանքի տարրեր ոլորտներում տեղի ունեցող սոցիալ-հոգեբանական փոփոխությունները: Անձնավորությունն անընդհատ ստիպված է աղապտացվել կատարվող փոփոխություններին և նրա ինտելեկտի և անձնային հատկությունների դրսերումներին որակապես նոր պահանջներ են առաջադրվում: Սոցիալական միջավայրին հարմարնան և անձի ինքնադրսակրման ու ինքնադրացման տեսանկյունից հատկապես կարևորվում է ինչպես անձի ինտելեկտուալ և անձնային հատկությունների, այնպես էլ դրանց համահարարերակցման ուսումնասիրման հիմնախնդրով:

Մարդկային ինտելեկտի հիմնահարցը նոր չէ, այն վաղուց ի վեր արժանացել է հոգեբանների, մանկավարժների և մի շարք այլ բնագավառների մասնագետների ուշադրությանը: Ենթադրվել է, որ ինտելեկտն ու ընդունակությունները պայմանավորում են գիտելիքների ձեռքբերման գործընթացն ու աշխատանքի արդյունավետությունը, քանի որ նպաստում են նպատական վարքի, ռացիոնալ մտածողության, շրջապատող աշխարհի հետ արդյունավետ համագործակցության և մի շարք այլ կարևորագույն խնդիրների իրականացմանը: Ինտելեկտի ուսումնասիրությունը կարևորվում է սոցիալական նոր պայմաններին մարդու աղապտացիայի գործում ունեցած նրա բացարկի նշանակությամբ, քանի որ այն դիտվում է որպես մարդու կենսագործունեության նոր պայմաններին հարմարվելու որոշակի ընդունակություն:

Թեև ինտելեկտի հոգեբանությունը հոգեբանական գիտության մեջ բավականին կայացած ոլրոտ է, այնուամենայնիվ, ինտելեկտը սոցիալական աղապտացիայի հետ կապող կոնկրետ մեխանիզմների առումով դեռևս բավարար չափով ուսումնասիրված չէ: Դեռ այս տեսանկյունով է դիտարկվում ինտելեկտի և անձնային տարրեր հատկությունների համահարարերակցման խնդիրը:

Դիմնախնդրի վերաբերյալ առկա մասնագիտական գրականության մեջ հաճախ են քննարկվում ինտելեկտի, ընդունակությունների զարգացման մակարդակի և անձնավորության գծերի փոխադարձ կապի բացահայտմանն ուղղված հետազոտությունները, որոնք վերաբերվում են ոչ միայն ինտելեկտի և անձնային հատկությունների փոխկապակցվածությանը, այլև ինտելեկտի և անձի հոգեկան այլ ոլորտների, ինչպես նաև ինտելեկտի և սոցիալ-տեսական ու հասարակական բնույթի երևույթների փոխայմանավորվածությանը:

Այնուամենայնիվ, գործոնային տեսության շրջանակներում ինտելեկտի և անձնավորության գծերի փոխկապակցվածության խնդիրն վերջնական լուծում չի տրվել: Դ.Մայերսը նշում է, որ հոգեբանների ուսումնասիրություններում անձնավորության գծերի և ինտելեկտի կապը թիւ է ուսումնասիրված, եղած արդյունքներն էլ խիստ հակասական են:

Կարելի է փաստել, որ ինտելեկտն ու անձնավորության գծերը մինյանցից անկախ գործուներ չեն, սակայն փորձարարական տվյալների հիման վրա դեռևս հնարավոր չէ որոշակիորեն ասել, թե հատկապես ինչպես է արտահայտված դրանց փոխկապակցվածությունը: Անձնավորության ինտելեկտի և անձնային առանձնա-

հատկությունների փոխապայմանավորվածության հիմնահարցն ընդգրկում է դեռևս չլուծված բազմաթիվ հոգեբանական հարցեր: Դեռևս բավարար լուծում չեն ստացել ինտելեկտի, անձնավորության ապրումակցման, կամային որակների, ընդհանուր ավտիվության, ագրեսիվության, անձի բնավորության շեշտվածության և հոգեբանական մի շարք այլ հատկությունների փոխապայմանավորվածությունը պարզաբանող հարցերը: Այդ անհրաժեշտությունն էլ հիմք է ծառայել մեր ուսումնասիրության թեմայի ընտրության համար:

Հետազոտության նպատակը: Բացահայտել ինտելեկտի և անձնային հատկությունների համահարարերակցության առանձնահատկություններն անձի գարգացման տարբեր փուլերում:

Հետազոտության հիմքում ընկած է այն հիմնական վարկածը, ըստ որի՝ ինտելեկտը, որպես հոգեբանական ֆունկցիոնալ մետահամակարգ ազդում է անձնային որոշակի հատկությունների՝ ապրումակցման, կամքի ուժի, ագրեսիվության, անձնային և իրավիճակային տագնապայմության դրսորման վրա: Անձնային հատկությունների և ինտելեկտի համահարարերակցությունը անձի գարգացման յուրաքանչյուր փուլում ունի դրսորման որոշակի առանձնահատկություններ: Որոշ հատկություններ առավել սերտ կապի մեջ են ընդհանուր ինտելեկտի հետ, ուրիշները՝ վերբալ:

Հիմնական նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

1. Վերլուծել հոգեբանական գրականության մեջ առկա ինտելեկտի և անձնային հատկությունների վերաբերյալ հոգեբանական տեսություններն ու հիմնական մոտեցումները:
2. Ուսումնասիրել ապրումակցման, կամքի ուժի, բնավորության շեշտվածության, անձնավորության ուղղվածության և ինտելեկտի համահարարերակցությունը:
3. Բացահայտել ագրեսիվության, անձնային և ռեակտիվ տագնապայմության, ոչգիտության, ճնշվածության, նյարդահոգեբանական անկայունության կարգավիրման գործուները:
4. Բացահայտել ինտելեկտի ընդհանուր և վերբալ տեսակների գործառույթը անձնային հատկությունների դրսորման գործում:
5. Ուսումնասիրել անձնավորության ինտելեկտի և անձնային տարբեր հատկությունների միջև առկա համահարարերակցման առանձնահատկություններն անձի գարգացման տարբեր փուլերում:
6. Բացահայտել անձնային հատկությունների դրսորման՝ անձի գարգացման երեք փուլերի համար ընդհանուր օրինաչափությունները:

Հետազոտության օբյեկտը ինտելեկտի և անձնային հատկությունների փոխապայմանավորվածության դրսորման գործընթացներն են:

Հետազոտության առարկան առարկան Անձնային և ինտելեկտուալ հատկությունների համահարարերակցությունն է՝ անձի գարգացման տարբեր փուլերում:

Հետազոտության ընտրակազմը Հետազոտությունն անցկացվել է անձի գարգացման երեք հաջորդական խմբերում՝ 13-15 տարեկան, 17-19 տարեկան և 25 - 30 տարեկան: Հետազոտությանը մասնակցել են 211 հետազոտվողներ:

13-15 տարեկանների խմբում ընդգրկված են եղել Երևանի թիվ 105 միջնակարգ դպրոցի 49 աշակերտներ, 17 - 19 տարեկանների խմբում հետազոտությանը մասնակցել են Խ. Արօվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի I և II կուրսերի 112 ուսանողներ, 25 – 30 տարեկանների խմբում՝ 50 հետազոտվող:

Հետազոտության համար տեսամեթոդական հիմք են ծառայել Ռ. Ֆ. Լոնովի, Վ.Դ. Շաղրիկովի, Վ.Վ. Դրուժինինի համակարգային մոտեցումը, Պ. Կ. Անոխինի՝ ֆունկցիոնալ համակարգերի տեսությունը, անձի ձևավորման և զարգացման՝ Բ. Գ. Անանիկի տեսությունը, ինտելեկտի ընդհանուր և մասնակի գործոնների՝ Զ. Սպիրոմենի տեսությունը:

Հետազոտության մեթոդները և դրանց ընտրության հիմնավորումը.

Օգտագործված մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորվել է ընտրված մեթոդոլոգիական հիմքերով և ուսումնասիրության առարկայով։ Մեթոդներն ու մեթոդիկաներն ընտրելիս հաշվի են առնվել հետևյալ չափանիշները. մեթոդների համարժեքությունը (վայելությունը) ներ ուսումնասիրության խնդիրներին, համապատասխանությունը հետազոտության տրամաբանական կառուցվածքին, միասնականությունը՝ մեթոդոլոգիական նույն համակարգում ընտրված մյուս մեթոդների հետ։ Հետազոտության ընթացքում օգտագործվել են դիտման, հոգեբանական գրույցի, անկախ բնութագրերի ընդհանրացման մեթոդները և հետևյալ ստանդարտացված մեթոդիկաները.

1. Զ. Ռավենի «Աստիճանաբար բարդացող այցուսակներ» մեթոդիկան՝ հնտելեկտի հետազոտման նպատակով,
2. «Զ. Ղ. Սպիրերգի և Յու. Լ. Խանինի Իրավիճակային և անձնային տագնապայնության մակարդակի գնահատման սանդղակ»-ը,
3. «Ազրեսիվության և ռիգիդության ինքնագնահատման սանդղակը»՝ ըստ Օ. Պ. Ելիսեևի,
4. «Ապրումակցման ընդունակությունների ինքնագնահատում» մեթոդիկան՝ ըստ Օ. Պ. Ելիսեևի,
5. «Ծննդվածության ինքնագնահատման մեթոդիկան» ըստ Օ. Պ. Ելիսեևի,
6. «Հոգեվիճակի ինքնագնահատման մեթոդիկայի» ընդհանուր ակտիվության սանդղակը ըստ Օ. Պ. Ելիսեևի,
7. «Անձի բնավորության շեշտվածությունը և նյարդա-հոգեբանական անկայունությունը» ախտորոշող մեթոդիկան՝ ըստ Ա. Կարելինի,
8. «Կամքի ուժի թեսու» մեթոդիկան, ըստ Ռ. Ս. Նեմովի,
9. Ո. Բ. Քերբելի «16 գործոնային անձնային հարցարանի Ը ձեզ»։

Գիտահետազոտական արդյունքների մշակման ընթացքը.

Ստացված տվյալները Ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության։ Լախքան համահարաբերակցության գործակցի հաշվարկումը կատարվել են առաջնային մաթեմատիկական հաշվարկներ։ Հենվելով տվյալների թույլատրելի տատանման հաշվումների արդյունքների վրա՝ շարքերը գտվել են, ինչից հետո դրանք Ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության։ Տվյալների ազատության աստիճանը և թույլատրելի սխալի հավանականությունը որոշվել է սխալի հավանականության Բ չափորոշիչի այցուսակի միջոցով։

Հետազոտության գիտական նորույթը: Կատարվել է անձի զարգացման տարբեր փուլերում ինտելեկտի և անձնային հատկությունների համակարգային տեսափորձարարական ուսումնասիրություն, բացահայտվել է անձի զարգացման տարբեր փուլերում ինտելեկտի գործառույթը անձնային հատկությունների դրսևորվածության գործում: Անձի զարգացման տարբեր փուլերում դիտարկվել են համահարաբերակցական կապերը, որոնք հիմք են ծառայել ինտելեկտի և անձնային հատկությունների փոխապայմանավորվածության օրինաչփությունների, հակադրությունների ու զարգացման դինամիկայի բացահայտման համար:

Հետազոտության տեսական նշանակությունը. Համակարգային ուսումնասիրության արդյունքները կարող են ընդլայնել ինտելեկտի և անձնային հատկությունների փոխազդեցության մասին հոգեբանական գիտելիքների շրջանակը և նպաստել անձի զարգացման հիմնախնդրի շրջանակներում անձնային հատկությունների և այլ հոգեբանական կառույցների փոխապայմանավորվածության տեսանկյունից ուսումնասիրությունների կատարմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը. Հետազոտության միջամկյալ և ամփոփիչ արդյունքները կարող են ներդրվել ինտելեկտի ընդհանուր և վերապատճենական հիմքերի մեջ և նաև անձնային հատկությունների զարգացմանն ուղղված թրենինդային ծրագրերի մշակման գործնրացում: Կարող են օգտագործվել «Ընդհանուր հոգեբանություն» և «Անձի հոգեբանություն» առարկաների ուսումնական նյութերում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Տարիքային տարբեր փուլերում գերակայում են անձնային տարբեր հատկություններ:
2. Ինտելեկտը գործառույթային իմաստով գերակա հատկությունների ձևավորման մեխանիզմ է:
3. Ինտելեկտը նպաստում է աղապատիվ հատկությունների ձևավորման ու դեզարապատիվ հատկությունների տրամադրմացիային:
4. Անձնային որոշ հատկություններ կարգավորվում են ընդհանուր ինտելեկտի կողմից, ուրիշները՝ վերապատճենական հիմքերի մեջ:

Հետազոտության փորձաքննությունը և տվյալների հուսալիությունը.

Հետազոտության արդյունքները պարբերաբ քննարկվել են և. Արովյանի անվան ՀՊՄՀ-ի Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի նիստերում և գիտաժողովներում: Ստացված արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունն ապահովված են ընտրված մեթոդաբանական հիմքերով, օգտագործված մեթոդների օբյեկտիվությամբ և համարժեքությամբ, փորձարկվողների թվաքանակով, տվյալների քանակական և որակական վերլուծություններով: Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հրատարակվել է վեց հոդված:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականությունից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքով 143 տպագիր է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված են հիմնախնդրի արդիականությունը, հետազոտության հիմնական վարկածը, օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները, հետազոտության սուբյեկտը, ընտրված մեթոդիկաները, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին «**հնտելեկտի հիմնախնդիրը հոգեբանական գիտության մեջ» գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:**

Առաջին՝ «**հնտելեկտի ուսումնասիրության հիմնական մոտեցումները» ենթագլուխը քննարկվում են ինտելեկտի ուսումնասիրության հիմնական մոտեցումները: «**Ինտելեկտ» հասկացությունը բնորոշելու փորձը պատկանում է Ռ. Ստերնբերգին: Որպես մեթոդ նա ընտրել է դատողությունների գործոնային վերլուծությունը՝ առանձնացնելով ա) վերբալ ինտելեկտը, բ) խնդիրներ լուծելու ընդունակությունը և գ) պրակտիկ ինտելեկտը: Զ. Սպիրոննը ենթադրում է, որ ինտելեկտը, ինչպես և հոգեբանական ցանկացած այլ իրողություն, լատենտ է, այսինքն՝ այն հնարավոր է ուսումնասիրել միայն մի շարք կենսական խնդիրների լուծման ժամանակ ի հայտ եկող անուղղակի խնդիրների միջոցով: Վ. Չտեռնի կարծիքով՝ ինտելեկտը կյանքի նոր պայմաններին հարմարվելու ընդհանուր ընդունակությունն է: Ըստ Պոլանիի, ինտելեկտը գիտելիքներ ձեռք բերելու միջոցներից մեկն է: Ըստ Մ.Կ. Ավիմովայի, ինտելեկտի հիմքը մտավոր ակտիվությունն է: Ե. Ա. Գոլորեկան գտնում է, որ ինտելեկտուալ արդյունավետության բազային գործոններն են ակտիվությունը, ինքնակառավարումը և աշխատունակությունը:****

Ինտելեկտի բազմաչափ մոդելի տիպիկ տարրերակներում ինտելեկտուալ առաջնային գործոնների առկայությունն է ենթադրվում: Դրանք Զ. Գիլֆորդի, Լ. Տերստոռունի, Վ. Դ. Շարդիկովի մոդելներն են: Այս մոդելները կարելի է միևնույն մակարդակի մոդելներ հանարել, քանի որ յուրաքանչյուր գործոնը կարող է ներկայացվել որպես գործոնային տարածքի անկախ չափումներից միայն մեկը:

«**Ինտելեկտ» հասկացությունը հոգեբանական գործականության մեջ դիտվել է որպես:**

1. Ժառանգական հատկություն:
2. Ինացության և պրոբեմների լուծման ընդիանուր ընդունակություն, որն ապահովում է ցանկացած գործունեության արդյունավետությունը և ընկած է մյուս ընդունակությունների հիմքում:
3. Բոլոր ինացական ընդունակությունների (սկսած զգայությունից մինչև մտածողություն) համակարգ:
4. Պրոբլեմները մտքում լուծելու ընդունակություն (առանց արտաքին փորձ-սխալների): Դակադրվում է ինտուիտիվ ինացության ընդունակությանը:
5. Ընդհանուր մտավոր ունակություն, որ կապվում է կյանքի նոր պայմաններին արդյունավետ աղապտացվելու հետ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ինտելեկտը ժառանգական նախադրյալների հիման վրա օնթոգենեզով զարգացող հոգեբանական ֆունկցիոնալ համակարգ է, որը դրսնորվում է, որպես անհատական հատկանիշ:

Երկրորդ՝ «Ինտելեկտի կապն անձնային կառուցների հետ» ենթագլխում ընդհանրացված են հոգեբանական գրականության մեջ ինտելեկտի և անձնային տարրեր կառուցների փոխայմանավորվածության հարցին նվիրված առկա հետազոտությունների արդյունքները:

Ինտելեկտը և անձնավորությունը միասնական համակարգում դիտարկելու մոտեցման կարևորությունը իր աշխատանքներում բազմից շեշտել է Բ. Գ. Անանեց: Նա նշում է, որ ինտելեկտի և անձի տեսության շատ ուսումնասիրություններ միմյանցից տարանջատված են: Միևնույն ժամանակ, ինտելեկտի ակտիվությունը մեծապես պայմանավորվում է նրանց միջև առկա խորը կապերով, որոնք առանձնահատուկ կերպով արտահայտվում են դիքորոշումներով, պահանջմունքներով, հետաքրքրություններով, իդեալներով և հավակնությունների մակարդակով պայմանավորվող մոտիվացիայի մեջ: Անձին բնորոշ որակներն ու մոտիվների կառուցվածքն իրենց հերթին կախված են իրականության նկատմամբ նրա վերաբերմունքի օբյեկտիվությունից, աշխարհը ճանաչելու փորձից և ինտելեկտի ընդհանուր գարգացածությունից:

Հոգեբանական գրականության մեջ ներկայացված է նաև ինտելեկտի և կրեատիվության փոխկապակցվածության հիմնախնդիրը (Զ. Գիլֆորդ, Է. Տորենս, Ր. Այգենկ, Ն. Կոգան և Ս. Վոլախ, Ռ. Ստերնբերգ, Մ. Խոլոդնյայ, Վ. Դրուժինին, Ն. Վ. Խազրատովա, Ա. Ն. Վորոնին), ինտելեկտի և դիմերօններ արդյունավետության փոխկապակցվածությունը (Դ. Յ. Դորդ և Ռ. Ս. Վայր), ինտելեկտի և ժամանակի ընկալման ծշտության փոխկապակցվածությունը (Ցու. Վ. Բուշով, Մ. Վ. Սկետլիկ և Ե. Պ. Կրուտենկովա), ինտելեկտի և գործունեության արդյունավետության փոխկապակցվածությունը (Դ. Ն. Պերկինս, Վ. Ն. Դորուժինին, Է. Ա. Գոլուբևա, Ս. Ա. Խոյումովա և Մ. Վ. Կաբարդովա, Լ. Ֆ. Բուռլաչովի և Վ. Ս. Բլեյխեր, Ու. Ծնեյդեր), ինտելեկտի և անձի պաշտպանական նեխանիզմների համահարաբերակցությունը (Կ. Ի. Սեմյոնովա), ինտելեկտի և լիդերության փոխկապակցվածությունը՝ (Օ. Վ. Բելոկոն), կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ինտելեկտի կառուցվածքային բաղադրիչների և ընտանեկան փոխհարաբերությունների փոխկապակցվածությունը (Ս. Վ. Ներիկովա):

Հիմնախնդիրի վերաբերյալ առկա գիտական գրականության մեջ կան ինտելեկտի, և անձնավորության կոնկրետ գծերի համահարաբերակցման բացահայտմանն ուղղված մի շարք հետազոտություններ: Մասնավորապես, ինտելեկտի գործոնային նողելի հիմնադիր Զ. Սայհրմենը ենթադրում էր, որ ինտելեկտը անկախ է տվյալ մարդու անձնային այլ գծերից: Այդուհանդեռ, նա առաջ էր քաշում ընդհանուր մտավոր էներգիայի գործոնի հիմնախնդիրը: Դ. Ն. Ռոբինսոնը ընդհանուր ինտելեկտի զարգացման տարրերություններ չի բացահայտել, չնայած պարզել է, որ էստրավերտներն ավելի հեշտությամբ են լուծում Վեբսլերի (WEIS) և Այգենկի (EPQ) թեստերի ոչ վերբալ հատվածը, իսկ ինտրովերտներն ավելի հեշտությամբ են կատարում վերբալ առաջադրանքները: Յ. Այգենկի և Ու. Բարբետսի հետազոտությունները ցոյց են տալիս, որ էստրավերտ-ինտրովերտ և ինտելեկտուալ զարգացման մակարդակի կապերը թույլ են կամ ամնշան: Դ. Ոտուկինգի և Ա. Քարմիի ուսումնասիրություններում որոշակի կապ է բացահայտվել անձնավորության էստրավերտության և գործունեության արդյունավետության միջև:

Ա.Բրանդը և Վ.Իգանը գտնում են, որ հուզականության և ընդհանուր ինտելեկտի միջև փոխադարձ կապ գոյություն ունի: Վ.Ս.Ռուսալովան և Ս.Խ.Դուդինը պնդում են, որ որոշակի կապ կա երեխաների խառնվածքային առանձին դրսերումների և ինտելեկտի միջև: Ինտելեկտի և հոգեկան տարբեր գործնրացների, ինչպես նաև ինտելեկտի ու հավակնությունների մակարդակի, ռեֆլեքսիայի և ինքնազնահատականի համահարաբերակցության հարցերին անդրադարձել է Ս. Մ. Փիլոսյանը:

Այնուամենայնիվ, խնդրի վերաբերյալ կարծիքներն ու ուսումնասիրությունների արդյունքները խստ հակասական են, և այն դեռևս լուրջ ուսումնասիրության կարիք ունի: Առկա ուսումնասիրությունները վերաբերվում են առանձին հատկությունների, իսկ մեր հետազոտության մեջ ընդգրկված են անձնային հատկությունների այն հիմնական բաղադրատարերը (ինտելեկտ, անձնավորության ապրումակցում, կամք, ընդհանուր ակտիվություն, ագրեսիվություն, անձնային և իրավիճակային տագնապյանություն ու հոգեբանական մի շարք այլ հատկություններ), որոնց ինտեգրման արդյունքում ձևավորվում է անձնային կառույցը: Դրանով է պայմանավորված համակարգային ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Աշխատանքի երկրորդ՝ «**Հետազոտության մեթոդաբանական հիմքերն ու մեթոդները» գլխում ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, գիտափորձի կազմակերպման փուլերն ու ուսումնասիրության մեթոդների հիմնավորումը:**

Մեր հետազոտությունը կատարվել է համակարգային մոտեցման շրջանակներում: Ֆիզիոլոգիական ֆունկցիոնալ համակարգերի տեսությունը մշակել է Պ. Կ. Անոխինը: Ըստ նրա, ֆունկցիոնալ համակարգը դիմամիկ, ինքնակարգավորվող կառույց է: Հոգեբանության մեջ համակարգային մոտեցման մեթոդոլոգիական հիմքերը նշակել են Բ. Գ Անանելը, Կ. Ժ. Կուզմինը Բ. Լ. Լոնովը, Վ. Ղ. Շադրիկովը, Վ. Վ. Դրուժիմինը: Համակարգային մոտեցումը հետազոտության մեթոդոլոգիական ուղղություն է, որում օբյեկտը դիտարկվում է որպես համակարգ, այսինքն, բազմաթիվ տարրերի, նրանց միջև կապերի և հարաբերությունների մի ամբողջություն: Ցանկացած հոգեբանական ֆունկցիոնալ համակարգ պետք է դիտել որպես փոխառակացված տարրերի համադրություն, որն ունի ներուժ, նպատակ և միջավայրի հետ հետադարձ կապի մեջ է:

Հետազոտության մեթոդներն ու մեթոդիկաները ընտրվել են ելելով մեթոդոլոգիական հիմքից և ուսումնասիրության առարկայից: Ուսումնասիրության յուրաքանչյուր փուլում մեր կողմից կիրառվել է նախնական փորձերի հիման վրա ընտրված մեթոդների օպտիմալ համադրությունը: Հետազոտական մասի անցկացման ժամանակ ընտրվել են այնպիսի մեթոդիկաներ, որոնք հոգեբանական գիտության մեջ բավականաչափ հայտնի և կիրառված են: Կատարվել են նախնական փորձեր, մեթոդիկաների և ընտրակազմի համապատասխանության ստուգման նպատակով, որից հետո բուն հետազոտությունը կազմակերպվել է երեք փուլով.

Առաջին փուլում կիրառվել է Զ.Ռավենի «Աստիճանաբար բարդացող աղյուսակներ» (Progressive Matrices) մեթոդիկան՝ ընդհանուր ինտելեկտի ստուգման նպատակով:

Երրորդ փուլում կատարվել է անձնային հատկությունների ինքնազմահատում: Հետազոտվողների տագնապայնության մակարդակի բացահայտման նպատակով կիրառվել է Զ. Դ. Սահիլերգի և Յու. Լ. Խամինի «Ուեակտիվ և անձնային տագնապայնության մակարդակի գնահատման սամրդակը»: Ագրեսիվությունը և ոչգիտությունը ուսումնասիրվել է «Ագրեսիվության և ոչգիտության ինքնազմահատման սամրդակով» (Օ. Պ. Ելիսեև): Հետազոտվողների եմպաթիկ ընդունակություններն ուսումնասիրվել են «Ապրումակցման (էմպաթիկ) ընդունակությունների ինքնազմահատում» մեթոդիկայով (Օ. Պ. Ելիսեև), ընկճվածության ինքնազմահատում՝ «Ընկճվածության ինքնազմահատման մեթոդիկայով» (Օ. Պ. Ելիսեև): Ընդհանուր ակտիվությունը գնահատվել է հոգեվիճակի ինքնազմահատման մեթոդիկայով (Օ. Պ. Ելիսեև): Մեր կողմից կիրառվել է միայն «ընդհանուր ակտիվության» սամրդակը: Հետազոտվողների կամային որակների գնահատման նպատակով օգտագործել ենք Ռ. Ս. Նեմովի՝ «Կամքի ուժի թեսու» մեթոդիկան:

Երրորդ փուլում կիրառվել են անձի բնավորության շեշտվածությանն ու անձնային մի շարք հատկությունների բացահայտման մեթոդիկաներ: Մասնավորապես, հետազոտվողների անձի բնավորության շեշտվածության ուսումնասիրման նպատակով օգտագործվել է «Անձի բնավորության շեշտվածությունը և նյարդա - հոգեբանական անկայունությունը» ախտորոշող մեթոդիկան (Ա.Ա. Կարելին): Հետազոտվողների անձնային որակներն ուսումնասիրվել են Ռ. Բ. Քերբելի «16 գործնային անձնային հարցարանի C ձևով»:


Ներկայացված են նաև մաքենատիկական-վիճակագրական մշակման մեթոդները, մասնավորապես համահարաբերակցային վերլուծության մեթոդը, որը հնարավորություն է տալիս բացահայտել հոգեկան երևույթների համահարաբերակցային կապի սերտությունը և բնույթը:

Աշխատանքի երրորդ՝ «**Ինտելեկտուալ և անձնային հատկությունների հետազոտության արդյունքների վերլուծություն**» գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից:


Առաջին՝ «Ինտելեկտի և անձնային հատկությունների դրսևորման առանձնահատկություններն անձի զարգացման երեք փուլերում» ենթագլուխ ներկայացված են հետազոտության ընթացքում անձի զարգացման յուրաքանչյուր փուլի տվյալները՝ ըստ անձնային հատկությունների:

Երրորդ գլուխի երկրորդ՝ «Անձի զարգացման տարբեր փուլերում ինտելեկտուալ և անձնային հատկությունների համահարաբերակցային ցուցանիշների վերլուծություն» ենթագլուխ ներկայացված են ինտելեկտուալ և անձնային հատկությունների համահարաբերակցային ցուցանիշները և դրանց վերլուծությունը: Մասնավորապես, 13–15 տարեկան հետազոտվողների ինտելեկտի և անձնային հատկությունների հետազոտության արդյունքների համահարաբերակցային

13-15 տարեկանների հնութեակի և աճճայի հասկությունների համախառապերակացային կապեր



ԳԺԱԿԱԽԱԼԵՐ 2.17-19 ԱՊՐԻԼԻ ԱՐԴՅՈՒՆԵԼՈՒ ԻՆՏԵՆՍԻՎԻ Ի ԱՄՋԱՀԻ ԽԱՍՏԱՐԱՐՄԱՆ ԸՆթացակարգի Խառնածությունների համախառման վեհականացնելու համար կատարված աշխատանքների կատարությունը



Վերլուծության արդյունքում $P \leq 0,01$ հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի և կամքի ուժի միջև ($r=0,796$): Կամքի ուժի հետ կապեր են բացահայտվել նաև տարիքային մյուս երկու խմբերում: 17-19 տարեկանների խմբում այդ կապն արտահայտվում է $P \leq 0,01$ հավաստիությամբ ($r=0,246$), իսկ 25-30 տարեկանների խմբում՝ $P \leq 0,05$ ($r=0,271$): Փաստորեն, կամային կոնկրետ ջանք գործադրելու գործնրացի և ինտելեկտի մեջտեղում ընկած են ինտելեկտուալ գործնրացներ, առանց որոնց կամային ջանքն ուղղակի անհնար:

13-15 տարեկանների խմբում $P \leq 0,05$ հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի և ապրումակցման ընդունակության միջև ($r=0,276$): Այսինքն, անձնավորության մոտ ապրումակցման կարողության բարձր մակարդակը պայմանավորում է ինտելեկտի բարձր մակարդակով: Այս կապը պահպանվում է նաև անձի զարգացման 17-19 և 25-30 փուլերում: Մասնավորապես, 17-19 տարեկանների խմբում այն արտահայտվել է $P \leq 0,01$ հավաստիության ($r=0,285$) ուժգնությամբ (գծապատկեր 2), իսկ 25-30 տարեկանների խմբում, $P \leq 0,05$ հավաստիության ($r=0,289$) ուժգնությամբ (գծապատկեր 3):

13-15 տարեկանների խմբում $P \leq 0,01$ հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի և ընկճվածության միջև ($r=0,513$): Սա նշանակում է, որ որքան բարձր է ինտելեկտի մակարդակը, համապատասխանաբար, բարձր է նաև ընկճվածության մակարդակը: 13-15 տարեկանում ինտելեկտի և ընկճվածության միջև դրսևորվող միջին արտահայտվածությամբ կապը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ինտելեկտուալ խնդիրի առկայության դեպքում դեռահասը այն աստիճանի է կլանվում, որ ցանկանում է այդ խնդիրը անպայման լուծել, իսկ դժվարությունների հանդիպելու պարագայում ընկճվածություն է դրսևորվում, քանի որ ունակ չլինելու տպավորության մտավախություն է ստեղծվում: 17-19 անձի զարգացման առավել կայուն շրջան է: Հավանաբար դա է պատճառը, որ 17-19 տարեկանների խմբում այս կապը չի արտահայտվել: 25-30 տարեկանում ինտելեկտի և ընկճվածության միջև կապը դառնում է բացասական $P \leq 0,05$ հավաստիության, ($r=-0,27$) ինչը մեր կարծիքով, վկայում է այն մասին, որ հասուն մարդը ոչ էական խնդիրների պատճառով ընկճված վիճակի մեջ չի ընկնում, եթե ընկնի էլ, ապա ինտելեկտի միջոցով կարող է քիչ էներգետիկ ծախսով այդ խնդիրները հաղթահարել:

13-15 տարեկանների խմբում $P \leq 0,01$ հավաստիության դրական կապ է բացահայտվել ինտելեկտի ու ընդհանուր ակտիվության միջև ($r=0,358$): Պարզվում է, որ որքան բարձր է ինտելեկտի ցուցանիշը, համապատասխանաբար, բարձր է նաև ընդհանուր ակտիվության մակարդակը: Տարիքային մյուս փուլերում այս կապը չի արտահայտվում: Հասուն տարիքում առավել ինտելեկտուալ մարդիկ խնդիրները լուծում են ոչ թե ֆիզիկական, այլ իմացական շարժունակության հաշվին:

Անձի զարգացման 13-15 փուլում $P \leq 0,01$ հավաստիության բացասական կապ է բացահայտվել ինտելեկտի և անձնային տագնապայմանության միջև ($r=-0,417$): 17-19 տարեկանների խմբում այս երկու հատկությունների հարաբերության բացասական բնույթը պահպանվում է, սակայն հարաբերությունն այնքան թույլ է, որ ճշտության մակարդակը թույլ չի տալիս այն որպես կապ դիտարկել ($r=-0,174$), իսկ 25-30 տարեկանների խմբում համահարաբերակցությունը դրսևորվում է $P \leq 0,05$ հավաստիությամբ ($r=-0,319$) ուժգնությամբ: Եթե մարդը մշակված աղապտացիոն մեխանիզմ

ունի, ուրեմն նա անձնային տագնապայնություն չի ունենա, որովհետև անձնային տագնապայնությունը ծևավորվող հատկանիշ է. անձն տագնապում է, եթե չի կարողանում խնդիրները լուծել, իսկ ինտելեկտը տվյալ դեպքում խանգարում է այդ հատկանիշի ծևավորման գործընթացին: Ինտելեկտի հետ կապի մեջ չի մտել իրադրային (ռեակտիվ) տագնապայնությունը:

Այսինքն, ինտելեկտը՝ որպես օրգանիզմի ֆունկցիոնալ համակարգ, որպես աղապտացիոն մեխանիզմ, կենսական խնդիրների լուծման ժամանակ տագնապային իրադրություններում անձնավորությանը հնարավորություն է տալիս բազմակողմանիորեն վերլուծել, համարել, դատողություններ անել և ինաստավորել այն իրադարձությունները, որոնք կարող են տագնապայնության ծևավորման ու դրսեռնան պատճառ դարձնալ, ինչն անձնավորությանը հնարավորություն է տալիս խուսափել տագնապային իրավիճակներից: Մյուս կողմից, ինտելեկտը չի կարող տագնապային իրադրության պայմաններում ակտիվորեն դրսեռվել, որովհետև նաև իրադրության մեջ բարձր ակտիվության է հասնում հուզական ոլորտը, որն ինքնին խանգարում է իմացական գործընթացների արդյունավետ ընթացքին:


Ինտելեկտի և ագրեսիվության միջև $P \leq 0,01$ հավաստիության ($r = -0,383$) բացասական կապ է բացահայտվել 25-30 տարեկանների խճրում: Նախորդ երկու տարիքային խմբերում ինտելեկտի և ագրեսիվության միջև կապ չի արտահայտվել: Ագրեսիվությունը անձի հարաբերականորեն կայուն որպես է, որն արտահայտվում է ագրեսիվ դրսեռելու պատրաստականությամբ, ինչպես նաև այլ մարդու վարքը իբրև թշնամական ընկապելու և մեկնաբանելու հակումով: Մեր կարծիքով, դրսեռված կապը բացատրվում է նրանով, որ դեռահասի ագրեսիվությունը հիմնականում իրավիճակային ագրեսիվություն է, որն այդ տարիքում կապվում է հորմոնալ համակարգի ակտիվության հետ: Ավելի հասուն տարիքում ինտելեկտուալ մարդու ինքնակառավարման ունակությունները կարգավորում են ագրեսիվ վարքը և բացասական կապ է ստացվում:

17-19 տարեկանների խճրում $P \leq 0,01$ հավաստիության դրական կապ է հայտնաբերվել ինտելեկտի և մասնագիտական ուղղվածության միջև ($r = 0,233$): 25-30 տարեկանում այդ կապն ավելի բարձր արտահայտվածություն է ստանում ($r = 0,418$, եթե $P \leq 0,01$):

17-19 տարեկանների խճրում $P \leq 0,05$ հավաստիության կապ է հայտնաբերվել ընդհանուր ինտելեկտի և վերքալ ինտելեկտի միջև ($r = 0,213$): Այս կապը մոտավորապես նույն ուժգությամբ ($r = 0,299$), $P \leq 0,05$ հավաստիությամբ պահպանվում է նաև 25-30 տարեկանների խճրում, իսկ 13-15 տարեկանների խճրում ընդհանրապես կապ չի արտահայտվում: Փաստորեն, կապ է արտահայտվել, որովհետև ինտելեկտն ինտեգրատիվ երևույթ է, բայց կապի հավաստիությունը 0,05-ից չի անցնում, որովհետև վերքալ և պատկերային ինֆորմացիան մշակվում է գլխուղեղի անզուզափության սկզբունքով՝ խոսքը՝ ձախ, պատկերները՝ աջ կիսագնդերում:

Ինչ վերաբերում է անձնավորության հատկությունների և վերքալ ինտելեկտի միջև արտահայտված կապերին, ապա վերքալ ինտելեկտը, ընդիանուր ինտելեկտի հետ համեմատած, ավելի սակավաբրիվ անձնային հատկությունների հետ է

25-30 տարեկանընթացի խոնացքների և աճնային հասկությունընթացի համար պետք է գոյացնի կապահով



համահարաբերակցության մեջ մտնում: Հատկանշական է նաև, որ վերքալ ինտելեկտի դեպքում, ի տարբերություն ընդհանուր ինտելեկտի, առկա կապերը կայուն բնույթ չեն կրուն, կապերը անձի զարգացման տարբեր փուլերուն չեն պահպանվում, իսկ ընդհանուր ինտելեկտը համահարաբերակցության մեջ է անձնային մի շարք հատկությունների հետ (կամքի ուժ, ապրումակցում, ընկճվածություն, անձնային տագնապայնություն): Ընդ որում՝ առկա կապերը պահպանվում են անձի զարգացման երեք փուլերում: Կապերի բնույթը տարիքային տարբեր փուլերում երբեմն փոփոխվում է: Վերքալ ինտելեկտը համահարաբերակցության մեջ է մտնում հիմնականում արտաքին դրսորումներ ունեցող հատկությունների հետ (շխզող տիպ, էքսպլոզիվ տիպ, էքստրավերսիվ-հնտրովերսիվ, պարփակվածություն-շիվողականություն):

Այսպիսով, անձնային հատկությունների ձևավորման գործընթացը պայմանավորվում է ինտելեկտի որոշ առանձնահատկություններով: Ընդհանուր ինտելեկտը և վերքալ ինտելեկտը համահարաբերակցության մեջ են մտնում անձնային տարբեր բնույթի հատկությունների հետ: Այսինքն, հանդս են գալիս որպես տարբեր հատկությունների ձևավորման գործոն:

Երրորդ գլուխ՝ «Ինտելեկտի և անձնային հատկությունների միջնորդավորված կապերի հետազոտություն» ենթագլխում ներկայացված են ինտելեկտի և անձնային հատկությունների միջև դրսնորված միջնորդավորված կապերն ու դրանց վերլուծությունը: Ինտելեկտուալ և անձնային տարբեր հատկությունների միջև ի հայտ եկած համահարաբերակցային կապերից բացի, բացահայտվել են նաև տարաբնույթ միջատկանիշային կապեր և դրանց փոխհարաբերությունների բնույթն անձի զարգացման տարբեր փուլերում:

Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց մեկնաբանումը և ընդհանրացումը հնարավորություն տվեց հանգելու հետևյալ եզրակացություններին.

1. Հոգեբանական գրականության մեջ ինտելեկտի և անձնային հատկությունների վերաբերյալ առկա տեսությունների ու հիմնական մոտեցումների ուսումնափրումից կարելի է եզրակացնել, որ ինտելեկտը ժառանգական նախադրյալների հիման վրա օնթոգենեզում զարգացող հոգեբանական ֆունկցիոնալ համակարգ է, որը դրսնորվում է, որպես անհատական հատկանիշ:
2. Ինտելեկտը կամային գործընթացների, ապրումակցման, անձնավորության մասնագիտական ուղղվածության կարգավորող գործառույթ ունի:
 - ա) Կամային գործընթացներում ինտելեկտուալ օպերացիաների շնորհիվ գնահատվում է դրդապատճառներից յուրաքանչյուրը, և մշակվում են նապատակին ուղղված կամային վարքի դրսնորման ձևերը:
 - բ) Ապրումակցման հիմքում ընկած է հոգեվիճակի գնահատման և վերաբերնությունների մշակման գործընթացների կարգավորումը, ինչը պայմանավորված է անձի ինտելեկտուալ հնարավորությամբ:
 - գ) 17-19 տարիքային փուլում, երբ ձևավորվում է մասնագիտական ուղղվածությունը, արտահատվում է ինտելեկտի և ուղղվածության

փոխկապակցվածությունը: 25-30 տարեկանում ինտելեկտի ազդեցությունը անձի մասնագիտական ուղղվածության վրա ավելի բարձր արտահայտվածություն է ստանում:

3. Անձի զարգացման տարբեր փուլերում ինտելեկտը հանդես է գալիս որպես ագրեսիվության, անձնային և ռեակտիվ տագնապայնության, ռիգիդության, ճնշվածության. նյարդահոգեբանական անկայունության կարգավորման գործոն.
- ա) Անձնային տագնապայնության և ագրեսիվության դրսևորման մակարդակը կարգավորվում է ինտելեկտի մակարդակով. անձնային տագնապայնությունը, ագրեսիվությունն առավել ցցուն դրսևորում են ունենում ինտելեկտուալ ցածր մակարդակի պատճառով, եթե անորոշ իրադրությունների լուծումը դժվարանում է: Միջինից բարձր ինտելեկտը հանդես է գալիս որպես աղապահիվ մեխանիզմ, ինչի շնորհիվ ագրեսիվություն և տագնապայնություն չի դրսևորվում:
- բ) Իրադրային տագնապայնության մակարդակը համարժեք է իրադրության բարդությանը, իսկ անձնային տագնապայնությունը իր մեջ ներառում է նաև իրադրությանը տրվող տագնապային ռեակցիան:
- գ) Ինտելեկտի բարձր մակարդակի պայմաններում այն վարքի կառավարման գերակա գործառույթ ունի և կարգավորում է անկայուն վարքի դրսևորումները: Կարգավորման գործներացը բարդանում է, եթե նյարդահոգեբանական անկայունությունը բարձր է: 17-19 տարիքային փուլը, 13-15 և 25-30 տարիքային փուլերի համեմատությամբ, անձի զարգացման հարաբերականորեն կայուն շրջան է, այդ պատճառով էլ այս փուլում անձնավորության անկայուն վարքը ինտելեկտի կողմից առավել հաջող է կառավարվում:
- դ) Անձնավորության՝ ընկճված վիճակի մեջ ընկճելու հավանականությունը պայմանավորվում է նրա ինտելեկտով, խնդրի լուծման բարդության աստիճանով և հավակնությունների մակարդակով:
4. Անձնային որոշ հատկություններ կարգավորվում, կառավարվում են ընդհանուր ինտելեկտի կողմից, մյուսները՝ վերբալ: Ընդհանուր ինտելեկտն ավելի գերակա ներ ունի, քան ինտելեկտի վերբալ տեսակը. վերբալ ինտելեկտի կառավարող գործառույթն առավել ակտիվորեն է դրսևորվում անձի զարգացման 17-19 տարիքային փուլում և կարգավորում է անձնային այն հատկությունները, որոնք արտաքին դրսևորվածություն ունեն՝ եքստրավերտությունը, շփողականությունը, բնավորության շեշտվածության շիզոիդ, հիստերոիդ, եքսպլոզիվ տիպերը: Ընդհանուր ինտելեկտը անձի զարգացման երեք փուլերում գործող կարգավորման ձևուն համակարգ է:
5. Անձի զարգացման տարբեր փուլերում, կախված տվյալ փուլում առկա խնդիրներից, անձնային որոշակի հատկություններ՝ կամքի ուժը, ապրումակցումը, ընդհանուր ակտիվությունը, ագրեսիվությունը, անձնային տագնապայնությունը, ինչպես նաև անձի մասնագիտական ուղղվածությունը, առավել ակտուալ են դաշնում, և ակտուալացված

հատկությունների նկատմամբ ինտելեկտի կարգավորող գործառույթը մեծանում է:

6. Անձնային հատկությունների փոխկապակցվածությունը պայմանավորված է միմյանց վրա ունեցած փոխազդեցության բնույթով: Մասնավորապես, ռիգիլությունը՝ որպես անձնային հատկություն, խոչընդոտում է կամքի ուժի, ընդհանուր ակտիվության, ինքնահսկողության, մասնագիտական ուղղվածության ձևադրմանը և նպաստում անձնային տագնապայնության, ընկճվածության, բնավորության շեշտվածության փսիխոասթենիկ և եքսպլոզիվ տիպերի դրսորմանը:

Այտեմախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հրատարակված հետևյալ աշխատանքներում՝

1. Ավագյան Ա. Ս., 11 – 16 տարեկան դեռահասների ինտելեկտի և անձնային գծերի փոխադարձ կապի առանձնահատկությունները, Մանկավարժության և հոգեբանության հիմնախմնիրներ, Միջրուկական կոնսորցիոնի գիտական հանդես, 2(5), Երևան, «Զանգակ-97», 2009թ., էջ 120-124:
2. Ավագյան Ա. Ս., ՈՒսանողի անձնային և կոգնիտիվ ոլորտների զարգացման որոշ առանձնահատկություններ, Մանկավարժական կրթության որակի հոգեբանական հիմնախմնիրները, գիտաժողովի նյութեր (10-12 հուլիսի, 2010), Երևան, «Ասոլիկ», 2010թ., էջ 18-23:
3. Ավագյան Ա. Ս., Ագրեսիվության և անձնային գծերի փոխադարձ կապի առանձնահատկությունները, Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախմնիրները. Միջազգային գիտաժողովի նյութեր, (28-30 հոկտեմբերի, 2011), Երևան, «Էղիք Պրիմոտ», 2011թ., էջ 70-71:
4. Авагян А. М., Соотношение особенностей общего и вербального интеллекта студентов с различными личностными качествами. Гуманизация обучения и воспитания в системе образования: теория и практика, Материалы международной научно-практической конференции, Пенза-Ереван-Колин, 2012г., стр. 81-83.
5. Ավագյան Ա. Ս., Անձնավորության ինտելեկտի և ճնշվածության համահարաբերակցային առանձնահատկությունները դեռահասության տարիքում, Հասարակություն, ընտանիք, դեռահաս. արդիական խնդիրներ Հայաստանում և սփյուռքում Միջազգային գիտազորժնական համաժողովի նյութեր(13-14 ապրիլի, 2012), Երևան, 2012թ.. էջ 56-60:
6. Ավագյան Ա. Ս., ինտելեկտի և անձնային որոշ հատկությունների համահարաբերակցային առանձնահատկություններն անձի զարգացման երեք փուլերում, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա, Խաչատուր Աբրույանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու (2012 թ. դեկտեմբերի 14), Լ պրակ, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2013թ., էջ 24-27:

АВАГЯН АНИ МОВСЕСОВНА

КОРРЕЛЯЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ ИНТЕЛЛЕКТА И ЛИЧНОСТНЫХ КАЧЕСТВ НА РАЗНЫХ ЭТАПАХ РАЗВИТИЯ ЛИЧНОСТИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 "Теория и история психологии".

Защита диссертации состоится 20 декабря 2013 года в 12:00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, улица Тиграна Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В условиях переходного общества перед личностью ставится задача интегрирования в качественно новое общество. В этих условиях особенно важную роль играют личностные и интеллектуальные качества человека, их взаимосвязь и взаимодействие.

Основная цель исследования. Выявить корреляционные особенности интеллекта и личностных качеств на разных этапах развития личности.

В основе исследования - гипотеза: интеллект, как психологическая функциональная метасистема, влияет на определенные личностные качества - на эмпатию, силу воли, на личностную и ситуативную тревожность.

Корреляция личностных качеств и интеллекта имеет определенные особенности на разных этапах развития личности: некоторые личностные качества более тесно связаны с общим интеллектом, другие - с вербальным.

Для достижении основной цели исследования, были выдвинуты **следующие задачи:**

1. Анализировать основные психологические теории и концепции интеллекта и личностных качеств в научной литературе.
2. Провести исследование корреляций между эмпатией, силой воли, акцентуацией характера, направленностью личности и интеллектом.
3. Выявить факторы, регулирующие агрессивность, личностную и ситуативную тревожность, ригидность, депрессивность и нервно-психологическую неустойчивость личности.
4. Выявить функции общего и вербального типов интеллекта в проявлении личностных качеств.
5. Провести исследование корреляционных закономерностей интеллекта и личностных качеств на разных этапах развития личности
6. Выявить общие закономерности проявления личностных качеств на трех этапах развития личности.

Научная новизна исследования. Проведено системное исследование личностных качеств и интеллекта на разных этапах развития личности. Выявлены функции интеллекта в проявлении личностных качеств. Рассмотрены корреляционные связи с целью выявления динамики закономерностей взаимной детерминации интеллекта и личностных качеств на разных этапах развития.

Теоретическая значимость исследования. Результаты системного исследования могут расширить круг научных психологических знаний о взаимодействии интеллекта и личностных качеств и способствовать рассмотрению проблемы развития личности с точки зрения взаимной детерминации личностных качеств и разных психологических конструктов.

Практическая значимость исследования. Полученные экспериментальные данные и выводы о развитие взаимоотношениях общего и вербального интеллекта с личностными качествами могут быть использованы в тренингах развития личностных качеств, в учебных материалах по курсам "Общая психология" и "Психология личности".

Достоверность и обоснованность теоретических и практических результатов обеспечены выбором методологических основ, объективностью и валидностью комплекса методик, достаточным количеством обследованного контингента. Результаты исследования периодически обсуждаются на заседаниях кафедры Теории и истории психологии и на научных конференциях.

ВО-ВВЕДЕНИИ обоснована актуальность проблемы, сформированы гипотеза, цель, задачи, объект и предмет исследования, научная новизна, теоретическая и практическая значимость исследования, представлены основные положения выносимые на защиту.

ПЕРВАЯ ГЛАВА - "Проблема интеллекта в психологической науке" – представлены теоретические и методологические подходы, исследования по проблемам интеллекта и взаимосвязей некоторых личностных качеств с интеллектом.

ВО ВТОРОЙ ГЛАВЕ - "Методологические основы и методы исследования"- представлены методологические основы, этапы исследования, методы изучения интеллекта, психологических качеств и обработки полученных результатов.

ТРЕТЬЯ ГЛАВА - "Анализ результатов исследования интеллектуальных и личностных качеств"- представлены результаты исследования интеллекта и личностных качеств, анализированы корреляционные связи на трех этапах развития.

Работа завершается общими выводами.

По теме диссертации опубликованы 6 статей.

AVAGYAN ANI MOVSES

THE CORRELATION PECULIARITIES OF INTELLECTUAL AND INDIVIDUAL QUALITIES OF A PERSON IN DIFFERENT STAGES OF DEVELOPMENT

Thesis for degree of candidate of psychological specialty 19.00.01 - "Theory and History of Psychology".

The defense of the thesis will be held on December the 20th of 2013 at 12:00 at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after KH. Abovyan, address: 0010, Yerevan, Tigran Metsi 17.

SUMMARY

The modernity of the issue. In the changing society conditions the individual confronts the problem of integrating into a newly-shaped community. In the context of such changes, the aim to investigate a person's intellectual and individual qualities and the correlation of the later becomes of utmost importance from the viewpoint of self-actualization of an individual and his or her adaptation to the social environment.

The aim of the investigation is to reveal the correlation peculiarities of intellectual and individual qualities of a person in different stages of development.

The basis of the investigation is **the principal hypothesis**, according to which the intellect, being a functional psychological metasystem, has an influence on such individual qualities as coexistence, will-power, aggressiveness, individual and situational panic states. The correlation of individual and intellectual qualities has certain peculiarities in every stage of development of a person. Some of the qualities more closely correlate with the general intellect type, others do with the verbal one.

For the fulfillment of the principal aim the **following goals have been put forward.**

1. To analyze psychological theories and major approaches to intellectual and individual qualities in psychological literature.
2. To study the correlation of coexistence, will-power, accentuated disposition as well as that of individual and intellectual types.
3. To reveal the factors operating over aggressiveness, individual and reactive panic states, rigidity and neuropsychological changeability.
4. To illustrate the function of general and verbal intellect types within the framework of personal qualities.
5. To investigate the correlation links between intellectual and individual qualities of a person in different stages of development.
6. To unfold the general norms operating in three different stages of the development of individual qualities.

The scientific novelty of the investigation. Thorough systematic studies have been made to illustrate the intellectual and individual qualities of a person in different stages of development as well as to unfold the functional role of the intellect in the process of actualization of personal qualities.

In different stages of individual development the correlation links have been taken into proper consideration, the latter providing sufficient grounds for revealing the inter dependence norms, contrasts and development dynamics of intellectual and individual qualities.

The theoretical significance of the investigation. Systematic investigation results can enlarge the framework of psychological background about the interrelation of intellectual and personal qualities and can foster studies from the viewpoint of the interdependence of individual qualities and other psychological structures within the framework of the individual development problem.

The practical significance of the investigation. The intermediate and final results of the investigation may be considered a contribution to the practical studies of general and verbal intellect types and of the development of personal qualities. The study results can also be used for the materials of such subjects as "General Psychology" and "Individual Psychology" as well as they can considerably promote the training programs dedicated to the development of intellectual and individual qualities.

The investigation experiments and data reliability. The investigation results have been incessantly discussed during the meetings held by the chair of the Theory and History of Psychology at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Reliability and certainty of the results are grounded by the chosen methodological bases, by the scientific objectivity and relevance of the methods used, by the number of the individuals having been experimented as well as by the quality and quantity analyses of the data.

The introduction embraces the issue modernity, the principal hypothesis, the object, the subjects matter, the aim and the problems of the investigation, the methodologies adopted, its scientific novelty, the theoretical and practical significance of the studies, the investigation experiments and the dissertation structure.

Chapter one refers to the analyses of scientific literature on the issue. It consists of two parts, the first of which provides thorough analyses of the science of Psychology. The second half encompasses a series of experiments made to reveal the interconnection of intellect and individual.

Chapter two presents methodological bases for the investigation, the justification of methods and the mathematical-statistical methods of the results.

Chapter three involves studies of the data and their psychological analyses.

The thesis ends with the general conclusions.

6 articles were published dedicated to the investigation activities.